ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

Ազատամուտ, Կայան, Այգեհովիտ, Բերքաբեր
Սևքար, Ծաղկավան, Կիրանց, Աճարկուտ
Ոսկեպար, Բաղանիս սահմանային գյուղեր

ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԻՋԵՎԱՆ-ԲԵՐԴ ԵՎ ԻՋԵՎԱՆ-ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

ԶԵԿՈՒՅՑ
09.04.2024

TATOYAN FOUNDATION
Center for Law & Justice

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Տավուշի մարզի Կիրանց, Ոսկեպար և մի շարք այլ գյուղերից Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամն[1] արձանագրել է ահազանգեր այն մասին, որ ՀՀ պետական սահմանների՝ Կառավարության հայտարարած սահմանազատման կամ դելիմիտացիայի գործընթացի շրջանակում կենսական նշանակության խնդիրներ են առաջ գալու բնակիչների համար: Խոսքը, մասնավորապես, գյուղերի բնակիչների իրավունքների խախտումների և անվտանգությունը խաթարելու մասին է (արոտավայրերից, վարելահողերից, տներից զրկվել, ադրբեջանական զինված ծառայողների սպասվող ներկայություն իրենց տների անմիջական հարևանությամբ, ճանապարհների արգելափակում և այլն): Նման ահազանգեր են արձանագրվել նաև զանգվածային լրատվամիջոցներում, ինչպես նաև սոցիալական մեդիայի տարբեր հրապարակումներում:

Հաշվի առնելով Հիմնադրամի առաքելությունը, ինչպես նաև աշխատակիցների գործունեության փորձը ՀՀ սահմանային բնակիչների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև սահմանաոլորտում փորձը՝ 2024թ. ապրիլի 9-ին իրականացվեց այց Տավուշի մարզի այն համայնքներ, որոնց հետ կապված արձանագրվել էին ահազանգերը:

Մասնավորապես, այցի ընթացքում փաստահավաք աշխատանքներ են իրականացվել Տավուշի մարզի Ազատամուտ, Կայան, Այգեհովիտ, Բերքաբեր, Սևքար, Ծաղկավան, Կիրանց, Աճարկուտ, Ոսկեպար, Բաղանիս սահմանային գյուղերի, ինչպես նաև Իջևան-Բերդ և Իջևան-Նոյեմբերյան ճանապարհի՝ այդ գյուղերին առնչվող հատվածներում: Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպում-առանձնազրույցներ, քննարկումներ գյուղերի բնակիչների, տեղում գործունեություն ծավալող հասարակական գործիչների, պատմաբանների, նախկին զինվորականների հետ:

Այցի և ուսումնասիրությունների արդյունքներով կազմվել է սույն զեկույցը, որի հիման վրա ներկայացվելու է նաև անգլերենով քարտեզների վրա նշագրումներով զեկույցի տարբերակ:

Փաստահավաք աշխատանքերն ապացուցում են, որ Կառավարության հայտարարած՝ Հայաստանի Տավուշի մարզում պետական սահմաններին վերաբերող լուծումների հեռանկարում առաջանալու են Հայաստանի համար անվտանգության լուրջ խնդիրներ,

[1] Այսուհետ՝ Հիմնադրամ:

ինչպես նաև ոտնահարվելու են բնակիչների իրավունքներն ու խաթարվելու են նրանց իրավունքները:

Ուսումնասիրություններ ենք իրականացրել Տավուշի մարզի Ազատամուտ, Կայան, Այգեհովիտ, Բերքաբեր, Սևքար, Կիրանց, Աճարկուտ, Ոսկեպար, Բաղանիս գյուղերի և ճանապարհների հատվածներում:

ԱՅՑԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Այցի սկզբում տեղի ունեցան մի շարք հանդիպումներ Իջևան քաղաքում, այնուհետև՝ Հիմնադրամի պատվիրակությունն Իջևան-Բերդ ճանապարհով ուղևորվեց Ազատամուտ և Կայան բնակավայրեր:

Նախ, ուսումնասիրություններ իրականացվեցին Ազատամուտում: Այս բնակավայրը հիմնադրվել է 1970-ական թվականներին՝ որպես Բենտոնիտ գործարանի բանավան: ԽՍՀՄ փլուզումից հետո երկաթուղու անգործության պատճառով գործարանը փակվել է: Այն հնարավոր չի լինի շահագործել՝ ճանապարհների ու ենթակառուցվածքների անօգտագործելի դառնալու պատճառով:

Հայաստանի անկախության հռչակման ժամանակաշրջանում Ազատամուտը ձևափոխվել է գյուղական բնակավայրի: Բնակիչներին, որպես ապրուստի միջոց վաստակելու հնարավորություն, հատկացվել են Ազատամուտի անմիջապես հարևանությամբ գտնվող վարելահողերը և արոտավայրերը: Սակայն հետագայում

սպասվող, այսպես կոչված, սահմանազատման հետևանքով բնակավայրը կզրկվի գյուղատնտեսական հողատարածքներից: Սա բնակիչներին կարող է ստիպել լքել բնակավայրը հենց այն պատճառով, որ նրանց տների անմիջական հարևանությամբ հայտնվելու են ադրբեջանական զինված ծառայողներ:

Առանց այն էլ Ազատամուտը Ադրբեջանի պետական սահմանից հեռու է 2,9 կիլոմետր, իսկ բուն ռազմական նշանակության տարածքից (միջդիրքային տարածք և այլն)՝ 1-1,5 կիլոմետր:



Ազատամուտում կան շենքեր, որոնց բնակարանները կա՛մ սահմանով կիսվելու են, կա՛մ անցնելու են ադրբեջանական կողմին: Այս հատվածում սահմանամերձ կդառնա նաև Դիտավան գյուղը, որը նույնպես կդառնա ադրբեջանական դիտարկման ներքո գտնվող բնակավայր:

Կայան բնակավայրն անմիջապես սահմանային հատվածում է գտնվում, իսկ Ազատամուտի բազմաբնակարան շենքերը նախկին Ադրբեջանի ԽՍՀ և Հայաստանի ԽՍՀ սահմանից հեռու են ընդամենը 20-30 մետր: Սա նշանակում է, որ այս բնակավայրերը վերանալու են:



Հնարավոր սահմանային փոփոխությյունների արդյունքում Կայանը չի ունենա կենսական պայմաններ և այլընտրանքային ճանապարհ, ինչի պատճառով կդադարի բնակավայր լինելուց:

Ազատամուտ-Կայանի տարածքով է անցնում նաև Իջևան-Բերդ միջպետական հիմնական մայրուղին, որն անխափան գործում է բոլոր եղանակային պայմաններում, բացառությամբ սահմանային լարվածության ժամանակներից:

Բերդ համայնքն ունի երկու այլընտրանքային բարձրալեռնային ճանապարհ: Դրանք Իջևան-Գանձաքար-Նավուր և Ճամբարակ-Թթուջուր-Նավուր ոչ ասֆալտապատ ճանապարհներն են: Այդ ճանապարհները, թեև ըստ հավաքված փաստերի՝ վերջերս սկսել են վերանորոգել, սակայն ձյան առատ տեղումների պատճառով հաճախ են փակվում:

Այս ճանապարհահատվածում են գտնվում Այգեհովիտ և Վազաշեն գյուղերը, որոնք 1992թ. մեծ հողային կորուստներ են ունեցել: Ադրբեջանական օկուպացիայի պատճառով դրանք ներկայում գտնվում են կա՛մ միջդիրքային հատվածներում, կա՛մ ադրբեջանական վերահսկողության ներքո:

Մասնավորապես, Վազաշենի շուրջ 10 կմ քառակուսի հողատարածքները ներկայում ադրբեջանական վերահսկողության ներքո է, և նշանք են մշակում այդ հողերը:

Ճանապարհի փակվելու պատճառով Այգեհովիտը և Վազաշենը տնտեսական և անվտանգության լուրջ մարտահրավերների առաջ են կանգնելու:

Ստացվում է՝ նույն Սյունիքի օրինակով պետք է կառուցվի այլընտրանքային ճանապարհ, որը պետք է անցնի անտառապատ լեռան լանջով, ինչն ավելի կբարդացնի գյուղերի կապն Իջևանի և հարակից բնակավայրերի հետ: Ադրբեջանական զինծառայողների կողից Կայանից Այգեհովիտ ճանապարհը արգելափակվելու է:



Այգեհովիտը Տավուշի խոշոր բնակավայրերից է, բնակչության հիմնական զբաղմունքն այգեգործությունն ու անասնապահությունն է: Սահմանային փոփոխություններից հետո գյուղը կզրկվի հողատարածքներից և արոտավայրերից: Հետևաբար, մարդիկ այլևս չեն ունենա գյուղատնտեսական գործունեության այդ տեսակներով զբաղվելու հնարավորություն. այն կա՛մ կվերանա, կա՛մ էականորեն կնվազի:

Դրանից բացի, ստացվում է, որ եթե Կայանի բնակավայրը անցնում է ադրբեջանական վերահսկողության ներքո, ապա նրանք այդ տարածք մուտք գործելու համար պահանջելու են առանձին միջանցք կամ ճանապարհ «իրենց տարածք» մուտք գործելու համար:

Փաստերի ուսումնասիրության հաջորդ մասը Սարիգյուղ-Բերքաբերի հատվածում էր, որտեղ գլխավորներից է հնարավոր սահմանային փոփոխություններից հետո Սաթլմիշ կոչվող բարձունքի հարցն է: Եթե ադրբեջանական զինված ծառայողներ հայտնվեն այս բարձունքի վրա, ապա ուղիղ վերահսկողության տակ կվերցնեն ոչ միայն մոտակա Ազատամուտ, Աչաջուր, Սևքար, Սարիգյուղ, Բերքաբեր, Ծաղկավան գյուղերը, այլև Երևան-Իջևան-ՀՀ պետական սահման միջպետական ճանապարհը:

Կիրանց գյուղի հատվածում Կառավարության հայտարարած՝ սահմանային լուծումների հետևանքով Ադրբեջանին պետք է անցնի Մ-4 Իջևան-ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Կիրանց գյուղի անմիջական հարևանությամբ գտնվող կամուրջը՝ շուրջ 600 մ ճանապարհահատվածի հետ միասին:

Բացի այն, որ վտանգվում է միջպետական մայրուղու հետագա շահագործումը, Կիրանցի բնակելի տները հայտնվում են հենց շփման գծի մեջ: Անգամ ոչ զինված տեսանելիության պայմաններում մարդկանց տները լինելու են ադրբեջանական զինված թիրախի ներքո: Կիրանցի արոտավայրերը, այգիները, այլ հողեր ևս անցնելու են Ադրբեջանին, իսկ գյուղը նեղ թերակղզու նմանությամբ գրեթե ամբողջությամբ շրջափակված է լինելու ադրբեջանական զորքերով:

Այս հատվածում ադրբեջանական զորքերի դիտարկման կամ թիրախի ներքո է հայտնվելու նաև Աճարկուտ գյուղը, ինչպես նաև դեպի գյուղ տանող ճանապարհը, գյուղի այգիներ և այլն:

Այնուհետև, Կիրանցից դեպի Ոսկեպար գյուղ միջպետական ճանապարհի հատվածը՝ մինչև գյուղ հասնելը չորս տեղից սեպաձև ելուստներով հատում է վիճելի սահմանները: Այսինքն՝ այդ հատվածներն անցնելու են ադրբեջանական վերահսկողության ներքո:

Ոսկեպարի հատվածում խնդիրը միայն ներկայում գործող ճանապահով չի սահմանափակվելու:

Այս հատվածով են անցնում Հայաստանի համար ռազմավարական և կենսական նշանակության գազատարը, ինտերնետ կապի մալուխները և այլն:

Խմելու և ոռոգման ջրի ակնունքները նույնպես հայտնեվելու են ադրբեջանական վերահսկողության ներքո:

Այս աշխարհագրական բարդ լեռնային հատվածում Ոսկեպար գյուղն Իջևան համայնքը Նոյեմբերյանին կապող կամուրջի նշանակություն ունի:

Ոսկեպար գյուղը գրեթե երեք կողմից սահմանային ու հետևաբար՝ արգելափակվելու է: Գյուղի որոշ հատվածներում նույնիսկ վիճելի սահմանով կամ սահմանից դուրս են անցնում որոշ բնակելի տներ ու անգամ տների մասեր են հայտնվելու ադրբեջանական վերահսկողությն ներքո:



Ոսկեպարի սահմանային փոփոխությունները լուրջ սպառնալիք են ստեղծելու Հայաստանի այդ ամբողջ տարածաշրջանի բնակչության համար: Վտանգվելու է միջպետական նշանակության ճամապարհին առհասարակ:

Նշվածի հետևանքով Նոյեմբերյան համայնքը զրկվելու է Տավուշին կապող ճանապարհներից: Ոսկեպարի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինված ծառայողների հայտնվելուց հետո նրանց տեսադաշտում են հայտնվելու Լոռու մարզի բնակավայրեր և ռազմավարական անվտանգության այնպիսի օբյեկտ, ինչպիսին Թեղուտի ջրամբարն է:





Այս փաստերը ևս մեկ անգամ վճռականորեն հաստատում են, որ Կառավարության հայտարարած, այսպես կոչված, դելիմիտացիայի կամ սահմանազատման սկիզբը կամ գործընթացը սկզբունքային առումով է հակասում դրա միջազգայնորեն հաստատված էությանը:

Հենց միջազգային պահանջներից է բխում, որ չի կարելի թույլ տալ ադրբեջանական զինված ծառայողների որևէ ներկայություն մեր բնակավայրերի հարևանությամբ կամ ճանապարհներին: